# *ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՈՒՅՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 010220/1*

ք. Երևան «01» փետրվարի 2020թ.

*ՀՀ ԱՆ «Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, (այսուհետ Պատվիրատու), ի դեմս տնօրեն **Ալեքսանդր Բազարչյանի**, մի կողմից, և **«Ժորա Եփրեմյան» ԱՁ-ն** (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.*

### *1. Պայմանագրի առարկան*

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ **մատուցել ավտոմեքենաների ավտոլվացման ծառայություններ**, իսկ Պատվիրատուն աշխատանքների պատշաճ կատարման դեպքում պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2. Ծառայությունների կատարման ժամկետ է սահմանվում «01» փետրվարի 2020թ.-ից մինչև «01» օգոստոսի 2020թ.-ը:

### *2. Կողմերի պարտականությունները և իրավունքները*

2.1. Կատարողը պարտավորվում է.
2.1.1 Պատշաճ մատուցել պայմանագրով սահմանված ծառայությունը համաձայն հավելվածի:

2.2. Պատվիրատուն պարտավորվում է.
2.2.1. վճարել Կատարողին մատուցված Ծառայության համար սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

2.3. Կատարողն իրավունք ունի՝
2.3.1. Պահանջել Պատվիրատուից պատշաճ մատուցված Ծառայության դիմաց իրեն վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝
2.4.1. Կատարողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը:

### *3. Պայմանագրի գինը և վճարման պայմանները*

3.1. Սույն Պայմանագրով Ծառայությունների ընդհանուր գինը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր մակնիշի մեքենայի ավտոլվացման արժեքը, որը սահմանված է սույն Պայմանագրի հավելվածով:

3.2. Սույն Պայմանագրի շրջանակներում մինչև պայմանագրի գործողության ավարտը Ծառայությունների ընդհանուր գինը չի կարող գերազանցել 192 000 (մեկ հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամը:

3.3. Ծառայությունների մատուցման գինը կայուն է, և Կատարողը իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

3.4. Սույն Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուն Կատարողին մատուցված Ծառայությունների դիմաց վճարում է համապատասխան երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտերի հիման վրա, դրանցում և դրանց հիման վրա Կատարողի կողմից թողարկված հաշվում նշված գումարների չափով՝ հաշիվը Կատարողի կողմից թողարկելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

### *4. Կողմերի պատասխանատվությունը*

4.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Կողմերն իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ազատվում են պատասխանատվությունից անհաղթահարելի ուժի /ֆորս մաժոր/ առաջացման պայմաններում:

### *5. Եզրափակիչ դրույթներ*

5.1. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր, ստորագրվում են Կողմերի կողմից և կազմում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարման պահը:

Ժույն պայմանագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն ,ասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի ,կական օրինակ:

*6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | | ԿԱՏԱՐՈՂ՝ | |
|---|---|---|---|
| ՀՀ ԱՆ «Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ | | «Ժորա Եփրեմյան» ԱՁ | |
| ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49/4 | | ՀՀ, ք. Երևան, Գրիբոյեդովի 17 | |
| ՀՎՀՀ՝ | 00011624 | ՀՎՀՀ՝ | 43037431 |
| Հ/Հ | 163058101441 | Հ/Հ | 19300997368900 |
| Բանկ՝ | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ | Բանկ՝ | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| Տնօրեն՝ | Ա. Բազարչյան | ԱՁ՝ | Ժ. Եփրեմյան |
| Ստորագրություն՝ | | Ստորագրություն՝ | |
| Կ.Տ | | | |

*Հավելված 1-ը հանդիսանում է 22 ԱՆ «Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ և «Ժորա Եփրեմյան» ԱՁ –ի միջև փետրվարի 2020թ.-ին կնքված թիվ 010220/1 ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:*

## ՀԱՎԵԼՎԱԾ N 1

Կազմված՝ *ք. Երևան, «01» փետրվարի, 2020թ.-ին*

CPV - 50111180

| Հ/Հ | Մեքենայի թափքի տարատեսակը | Քանակը | Յուրաքանչյուր մեքենայի համար հաշվարկված ավտոլվացման արժեքը |
|---|---|---|---|
| 1 | Սեդան | 1 | 2000 |
| 2 | Ամենագնաց/քրոսովեր | 1 | 3000 |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | | ԿԱՏԱՐՈՂ՝ | |
|---|---|---|---|
| ՀՀ ԱՆ «Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ | | «Ժորա Եփրեմյան» ԱՁ | |
| ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49/4 | | ՀՀ, ք. Երևան, Գրիբոյեդովի 17 | |
| ՀՎՀՀ՝ | 00011624 | ՀՎՀՀ՝ | 43037431 |
| Հ/Հ | 163058101441 | Հ/Հ | 19300997368900 |
| Բանկ՝ | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ | Բանկ՝ | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| Տնօրեն՝ | Ա. Բազարչյան | ԱՁ՝ | Ժ. Եփրեմյան |
| Ստորագրություն՝ | | Ստորագրություն՝ | |

Կ.Տ